

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՓԱՍՏԱԿԱՆ ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ գործող ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներից մեկը միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության ճանաչումն է (ՀՀ ընտանեկան օրենսգրքի հոդվ. 1, մաս 2): Ընդհանուր կանոնի համաձայն՝ միայն օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնությունն է ամուսինների համար առաջացնում օրենքով նախատեսված իրավունքներ ու պարտականություններ:

Միաժամանակ նշենք, որ «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» 2007 թ. փետրվարի 22-ին ընդունված ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9 հոդվածի համաձայն՝ «ՀՀ-ն ճանաչում է, ՀՀ կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները»: Սակայն նշված օրենքի ընդունումից մինչև օրս ՀՀ կառավարության և Եկեղեցու միջև այդ կապակցությամբ որևէ համաձայնագիր չի ստորագրվել և որևէ կարգ չի սահմանվել: Իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից»: Այստեղից հետևում է, որ Օրենքի 9 հոդվածը, ըստ էության, դեռևս չի գործում, ուստի ՀՀ-ում ներկայումս ճանաչվում են միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունները և ամուսնալուծությունները:

Բազմաթիվ երկրների օրենսդրությամբ ևս ճանաչվում են միայն օրենքով սահմանված կարգով ձևակերպված, այսինքն՝ իրավասու պետական կամ մունիցիպալ մարմիններում գրանցված ամուսնությունները կամ որոշակի եկեղեցական արարողակարգով կատարված ամուսնությունները, եթե դրանք տվյալ երկրում հավասարեցված են աշխարհիկ ամուսնություններին¹:

¹ Տե՛ս **Jung H.** Ehevertraege: Fragendes Familienrechts. Frankfurt am Main, 1995, էջ 20, 41 - 46, «Гражданский кодекс Квебека». М., 1999, էջ 86, «Комментарий к Семейному кодексу Российской Федерации». М., 1996, էջ 51 - 52:

Միևնույն ժամանակ, միշտ էլ գոյություն է ունեցել, այսպես կոչված, «փաստական ամուսնությունը»², որն այլ կերպ կարելի է բնորոշել որպես «օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված ամուսնություն»³:

Փաստական ամուսնության առնչությամբ ընտանեկան իրավունքի դոկտրինայում լայնորեն քննարկվել և այժմ էլ քննարկվում են երկու խնդրահարույց հարցեր.

1) արդյո՞ք պետությունը պետք է ճանաչի փաստական ամուսնությունը, այսինքն՝ դրա հետ կապի իրավական հետևանքներ, և եթե այո, ապա ի՞նչ ծավալով,

2) արդյո՞ք փաստական ամուսնությունը իրավական պաշտպանություն ստանալու համար պետք է բավարարի որոշակի պայմանների՝ դրանով իսկ առանձնանալով արտամուսնական այլ միություններից, և եթե այո, ապա ի՞նչ պայմաններ են դրանք:

Առաջադրված հարցերը չափազանց արդիական և կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունքի և ընտանեկան օրենսդրության զարգացման ու կատարելագործման հեռանկարների տեսանկյունից, եթե հաշվի առնենք, որ վերջին տարիներին փաստական ամուսնությունները տարածված երևույթ են դարձել նաև Հայաստանում: Առաջին հայացքից պարզ թվացող այս հարցերի օրենսդրական կարգավորումն այնքան էլ դյուրին չէ, սակայն անխուսափելի է:

Բանն այն է, որ ընտանեկան հարաբերությունների ոլորտը այն «զգայուն» բնագավառներից է, որտեղ առավելագույնս շոշափվում են անձնական կյանքի ինտիմ կողմերը, որտեղ անձնականը գերակայում է գույքայինի նկատմամբ, իսկ դրանց բովանդակությունը շղարշված է հասարակությունում գերիշխող բարոյական պատկերացումներով⁴: Այդ հարաբերությունների զարգացման շարժիչ ուժերն են անհատի, հասարակության և պետության փոխկապակցված շահերը, ինչն էլ պահանջում է դրանց կարգավորման գործընթացում հանրային և մասնավոր սկզբունքների, իմպերատիվ և դիսպոզիտիվ կարգավորման եղանակների խելամիտ և հավասարակշռված զուգակցում:

Հաճախ ամուսնական զույգերը նախընտրում են փաստական ամուսնությունը, որովհետև այն չի հանգեցնում օրինական ամուսնությանը հատուկ իրավական հետևանքների, և զույգերին, բարոյականից բացի, որևէ այլ պարտավորությամբ չի կապում: Այլ դեպքերում զույգերը փաստական ամուսնությունը համարում են ընտանեկան միության այլընտրանքային ձև և չեն գրանցում այն՝ գրանցված ամուսնությունը համարելով հնաոճ⁵ և

² Մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են նաև այլ հասկացություններ. «ամուսինների կենակցություն», «փաստական կենակցություն», «կոնկուբինատ», «քաղաքացիական ամուսնություն» և այլն: Գտնում ենք, որ նշված բոլոր հասկացությունները, այդ թվում՝ «փաստական ամուսնություն» հասկացությունը, պայմանական են, ուստի նախընտրելի է վերջինիս օգտագործումը, որն ավելի է համապատասխանում ընտանեկան-իրավական դոկտրինայում ձևավորված եզրութաբանական ավանդույթին:

³ «Большой юридический словарь». М., 2002, с. 652:

⁴ Տե՛ս **Покровский И. А.** Основные проблемы гражданского права. М., 2003, (Класика российской цивилистики), էջ 162:

⁵ Տե՛ս **Слепакова А. В.** Правоотношения собственности супругов. М., 2005, էջ 416:

այլն: Նման դեպքերում, երբ անձինք գիտակցաբար որոշում են սահմանված կարգով չգրանցել իրենց ամուսնությունը և ուրեմն չեն ձգտում պաշտպանություն ստանալ պետությունից, թվում է՝ պետք է գործի մարդու անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, մասնավոր կյանքին պետության չմիջամտելու սկզբունքը:

Սակայն ավելի հաճախակի են այն դեպքերը, երբ ամուսնությունը չի գրանցվում զույգերի կամ նրանցից մեկի կողմից ինչ-որ նյութական բարիքների կորստից խուսափելու, ավելի քիչ պատասխանատվություն ստանձնելու, որոշակի ծախսերից ազատվելու և նման այլ նպատակներով, ինչը, եթե ոչ այդ պահին, ապա հարաբերությունները դադարելու դեպքում թուլացնում է կողմերից գոնե մեկի դիրքերը, ուստի նման դեպքերում անհատի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ է պետության միջամտությունը:

Չպետք է մոռանալ նաև, որ ընտանեկան, այդ թվում՝ ամուսնական հարաբերություններն անմիջականորեն հիմնված են տվյալ հասարակությունում դարերով ձևավորված ազգային և բարոյական ավանդույթների վրա:

Այսպիսով, փաստական ամուսնական հարաբերությունների նկատմամբ այս կամ այն դիրքորոշում որդեգրելիս պետությունը նախևառաջ պետք է հաշվի առնի, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է՝ մի կողմից պաշտպանել թույլ կողմի շահերը, մյուս կողմից՝ հնարավորինս չմիջամտել անհատի մասնավոր ընտանեկան կյանքին, մի կողմից հաշվի առնել կյանքի փոփոխվող հանգամանքները, մյուս կողմից՝ հնարավորինս չվնասել ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին ու հասարակության մեջ ձևավորված բարոյական պատկերացումներին:

Առաջադրված հարցերի վերաբերյալ մեր դիրքորոշումն արտահայտելու համար անհրաժեշտ ենք համարում հակիրճ անդրադառնալ փաստական ամուսնության՝ որպես հասարակական երևույթի ձևավորման պատմական ակունքներին:

Փաստական ամուսնության առաջին պատմական ձև է համարվում զուգամուսնությունը⁶: Այս հանգամանքը, իհարկե, պայմանական է, քանի որ ի սկզբանե այն եղել է տղամարդու և կնոջ անհատական միության միակ ձևը, որը հետագայում զույգային ընտանիքի հիմք հանդիսացավ: Եվ քանի որ զուգամուսնությունը իրավական ձև չունեի, այն կարծես արտահայտում էր փաստական ամուսնությունը «մաքուր տեսքով»:

Փաստական ամուսնության երկրորդ պատմական ձևը հին հռոմեական *sine manu* ամուսնությունն է, որն առաջացել է որպես հակակշիռ *cum manu*-ին և հիմնված էր ամուսնու ու կնոջ ազատ համաձայնության և ըն-

⁶ Տոհմական կարգերի գոյության վերջին շրջանում խմբային ամուսնությանը փոխարինում է զուգամուսնությունը: Ջուգամուսնությունը մայրիշխանական տոհմի շրջանում առաջացած միամուսնական հարաբերությունների ձև է: Այն աստիճանական քայլ էր դեպի ընտանեկան հարաբերությունները, քանի որ զուգամուսնական կապերը ինչ-որ չափով պայմանավորված էին տղամարդու և կնոջ փոխադարձ կապվածությամբ (տես **Գ. Զ. Ղարախանյան**, *Յայաստանի ընտանեկան իրավունքի զարգացման պատմությունը 20-րդ դարում* (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Եր., 2004, էջ 37):

տանիքում նրանց իրավահավասարության վրա: Ծագելով հասարակ ամուսնական կենակցությունից և ձգտելով խուսափել manus-ից (ամուսնու իշխանությունից)՝ այս ամուսնությունը կնքվում էր ամուսնական համաձայնագրի միջոցով: Դրան հետևում էր կնոջը ամուսնու տուն բերելը, որն ուղեկցվում էր տարբեր կենցաղային արարողություններով, որոնք, սակայն, իրավական նշանակություն չունեին⁷:

Sine manu ամուսնության հետ մեկտեղ գոյություն ուներ փաստական ամուսնության պատմական դասական ձևը՝ կոնկուբինատը, որը հռոմեացի իրավաբանների բնորոշմամբ՝ տղամարդու և կնոջ մշտական միություն է առանց ամուսնության մեջ մտնելու փոխադարձ մտադրության⁸: Հին հռոմեական իրավակարգում, սակայն, կոնկուբինատը մաքուր փաստական հարաբերություն չէր: Այն միության ձև էր, որը, բնականաբար, զիջում էր ամուսնությանը, սակայն ճանաչվում էր իրավունքի կողմից: Նրանում բացակայում էր affectio maritales-ը (ամուսնական միության մեջ ապրելու մտադրությունը) տղամարդու կողմից և dignitas uxoris-ը (տղամարդու սոցիալական վիճակին հետևելու մտադրությունը) կնոջ կողմից: Այս կենակցությունը, որպես օրենքով թույլատրված բնորոշելը, նշանակում էր, որ բացակայում էին ամուսնության մեջ մտնելու օրենսդրական խոչընդոտները (մոտիկ ազգակցությունը, չլուծված ամուսնության մեջ գտնվելը և այլն): Սակայն նման կապի մեջ գտնվող անձինք չէին օգտվում գույքի նկատմամբ ամուսնական իրավունքներից: Կոնկուբինատը իրավական հետևանքներ էր առաջացնում միայն երեխաների համար, որոնք օժտվում էին հորից ալիմենտ ստանալու և նրա գույքի նկատմամբ որոշ ժառանգական իրավունքներով⁹:

Արդեն IX դարում Բյուզանդիայի Լևոն Իմաստուն կայսեր կողմից սահմանվեց, որ քաղաքացիները կարող են ամուսնանալ միայն եկեղեցական պսակադրությամբ, և միայն այդ արարողակարգով կատարված ամուսնությունն է առաջացնում իրավական հետևանքներ¹⁰:

Քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում նույնպես ճանաչվում էին միայն եկեղեցական արարողակարգով կատարված ամուսնությունները: Եվ քանի որ միաստվածության վրա հիմնված բոլոր կրոնները քննադատում էին ցանկացած արտամուսնական կենակցություն, նման կրոն ունեցող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, փաստական ամուսիններին իրավական պաշտպանություն չէր տրամադրվում, նրանց միջև անձնական և գույքային հարաբերություններն օրենքով չէին կարգավորվում: Օրենսդրին հետաքրքրում էր միայն արտամուսնական կապերից ծնված երեխաների ճակատագիրը, այդ թվում՝ հոր կողմից նրանց ապրուստի միջոց տրամադրելը: Առանձին դեպքերում արտամուսնական երե-

⁷ St'u Франчози Дж. Институционный курс римского права. М., 2004, т. 167:

⁸ St'u Гарридо М. Х. Римское частное право: казусы, иски, институты. М., 2005, т. 271:

⁹ St'u Хвостов В. М. Система римского права. М., 1996, т. 107, 367; Новицкий И. Б. Римское право. М., 1993, т. 63; Пухан И., Полинак-Ахимовская М. Римское право. М., 1999, т. 113:

¹⁰ St'u Тарусина Н. Н. Брак по российскому семейному праву: учебное пособие. М., 2010, т. 139:

խայի հորը կարող էին օրենքով պարտավորեցնել ապրուստի միջոց տրամադրել նաև երեխայի կարիքավոր մորը: Ընդ որում, արտամուսնական կապերից ծնված երեխաների իրավունքների ու պարտականությունների (անձնական, ալիմենտային, ժառանգական) առաջացման համար նշանակություն չունեն այն, թե ինչ կապերի արդյունքում են նրանք ծնվել՝ փաստական ամուսնակա՞ն, թե՞ այլ:

Որոշ դեպքերում, սակայն, փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց իրավունքները և նրանց պարտատերերի շահերը պաշտպանել է դատական պրակտիկան¹¹: Առանձին հեղինակներ նշում են, որ Անգլիայում մինչև 1753 թ. և Շոտլանդիայում գրեթե մինչև XIX դարի կեսերը ճանաչվում էին, այսպես կոչված, «ըստ ընդհանուր իրավունքի ամուսնությունները» (common law marriage): Նման ամուսնության համար չէր պահանջվում ձևականությունների պահպանում: Բավական էր միայն, որ կողմերը կամավոր ցանկություն հայտնեին դառնալ ամուսիններ և մտնեին փաստական ամուսնական հարաբերությունների մեջ: Այդ միության ճանաչման համար այն պետք է «ամուսնության հեղինակություն» ունենար, այսինքն՝ լիներ բավական երկարատև և հենց այդպիսին ընկալվեր շրջապատի կողմից: Սա անվանում են նաև «ամուսնություն ըստ սովորույթի և ընդհանուր կարծիքի»: Այս ամուսնությունը ենթադրում էր, որ կողմերից ոչ մեկը այլ անձի հետ ամուսնության մեջ չի գտնվում¹²:

Շուտով ամուսնության աշխարհականացման հետևանքով եկեղեցական ամուսնությանը փոխարինում է **քաղաքացիական ամուսնությունը**, որն առաջին անգամ սահմանվել է Յոկոնդիայում XVI դարում, ապա Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում: Ռուսաստանում քաղաքացիական ամուսնություն սահմանվել է 1874 թ. ապրիլի 12-ի օրենքով և այն էլ միայն հնադավանների համար՝ ելնելով պետական անհրաժեշտությունից¹³:

Տեղին է նշել, որ հասարակության լայն շրջաններում քաղաքացիական ամուսնությունը նույնացվում է փաստական ամուսնության հետ, ինչը սխալ է, քանի որ քաղաքացիական ամուսնությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունն է: Քաղաքացիական ամուսնությունը նույնպես ձևական (ձևակերպված) ամուսնություն է, միայն զրկված է եկեղեցական օրհնությունից և իրականացվում է պետական և ոչ թե եկեղեցական իշխանության առաջ¹⁴: Քաղաքացիական և փաստական ամուսնություն հասկացությունների՝ որպես նույնանշանակ ընկալումը պայմանավորված է նրանով, որ ամուսնության աշխարհականացումից հետո քաղաքացիական կացության ակտերում իրենց ամուսնությունները գրանցած անձանց եկեղեցին համարում էր օրինական ամուսնության մեջ չգտնվողներ, այսինքն՝ քաղաքացիական ամուսնությունները համարում էր ոչ օրինական, այնպես, ինչպես փաստա-

¹¹ Տե՛ս Жюллио де ла Морандьер Л. Гражданское право Франции. Т. 1. М., 1958, էջ 528-529:

¹² Տե՛ս Слепакова А. В., նշվ. աշխ., էջ 414:

¹³ Տե՛ս Գ. Յ. Ղարախանյան, նշվ. աշխ., էջ 63-64:

¹⁴ Տե՛ս Шершеневич Г. Ф. Учебник русского гражданского права. Т. 2. М., 2005 էջ 252:

կան ամուսնությունները: Այստեղից էլ հասարակության մեջ ձևավորվել է թյուր կարծիք, որ քաղաքացիական ամուսնությունը չգրանցված, անօրինական, այսինքն՝ փաստական ամուսնություն է:

Քաղաքացիական ամուսնությունը Խորհրդային Ռուսաստանում, հետևապես Հայաստանում, ընդունվեց Խորհրդային ժամանակաշրջանի առաջին նորմատիվ ակտով՝ 1918 թ. ՌՍՖՍՀ քաղաքացիական կացության ակտերի, ամուսնական, ընտանեկան և խնամակալական իրավունքի օրենսգրքով, որով օրինական էին ճանաչվում միայն ՔԿԱԳ մարմիններում գրանցված քաղաքացիական (աշխարհիկ) ամուսնությունները: Եկեղեցու դեմ Խորհրդային իշխանության պայքարի միջոցներից մեկն էլ հենց միայն աշխարհիկ ամուսնությունների ճանաչումն էր: Փաստական ամուսնությունների մասով նշված ակտը նախկին օրենսդրության համեմատ որևէ նորույթ չէր բովանդակում: Գ. Մ. Սվերդլովը նշում է. «Այլ մոտեցում այդ ժամանակաշրջանում չէր էլ կարող լինել: Քաղաքացիական ամուսնության համար սուր պայքարի պայմաններում փաստական ամուսնությունները ճանաչելը կնշանակեր ճանաչել նաև եկեղեցական ամուսնությունները»¹⁵:

Ամուսնության պետական գրանցման կողմնակիցները գտնում էին, որ դա կանխում է այն միությունների ստեղծումը, որոնք չեն համապատասխանում ամուսնության օրինական պայմաններին (տարիք, ազգակցություն և այլն), նշանակություն ունի ազգաբնակչության հաշվառման համար, զսպում է թեթևամիտ կապերը, բացառում է բազմակնությունը:

Հակառակ տեսակետի կողմնակիցները նշում են, որ միայն գրանցված ամուսնությանը իրավական նշանակություն տալը, փաստական ամուսնությունների իրավական հետևանքները չճանաչելը բացասաբար էին ազդում կանանց շահերի վրա: Որպես կանոն, չգրանցված ամուսնությունների մեջ էին առավել անապահով խավի կանայք, որոնք ծանր սոցիալական պայմաններում էին և իրավական պաշտպանության կարիք ունեին¹⁶:

Ն. Վ. Կրիլենկոն փաստական ամուսնությունը ճանաչելու օգտին օբյեկտիվ և սուբյեկտիվ փաստարկներ էր բերում՝ նշելով, որ նախ՝ փաստական ամուսնությունները արդեն այդ պահին՝ 1923 թ., շատ էին, բացի այդ, չի կարելի գրանցման ձևական պահին վերագրել այդ հարաբերությունների էությանը սկզբունքորեն հակառակ իրավաստեղծ նշանակություն¹⁷:

Յա. Ն. Բրանդենբուրգսկին նշում էր. «Եթե հրաժարվել ենք երեխաներին դասակարգել ամուսնության մեջ ծնվածի և արտամուսնականի, ապա ժամանակը չէ՞ արդյոք հրաժարվել ամուսնությունները օրինականի և անօրինականի դասակարգելուց»¹⁸: Հեղինակն այնուհետև ասում է, որ գրանցումը չի նպաստի ամուսնության առավել տևականությանը և ունակ չէ արդյունավետ պայքարելու անբարոյականության դեմ¹⁹:

¹⁵ Տե՛ս Свeрдлов Г. М. Брак и развод. М., 1949, էջ 6:

¹⁶ Տե՛ս Генкин Д. М., Новицкий И. Б., Рабинович Н. В. История советского гражданского права. М., 1949, էջ 427-428:

¹⁷ Տե՛ս Крыленко Н. В. Проект о браке и семье // Сборник статей и материалов по брачному и семейному праву. М., 1926, էջ 65:

¹⁸ Տե՛ս Бранденбургский Я. Н. Брак и его правовые последствия // Сборник статей и материалов по брачному и семейному праву. М., 1926, էջ 37:

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

Օրենսդրության մեջ և իրավունքի դոկտրինայում առկա այս հակասությունները ազդում էին նաև դատական պրակտիկայի վրա: Արտամուսնական կապերի ընթացքում ձեռք բերած գույքի բաժանման գործեր քննելիս դատարանները ստիպված էին անալոգիայով կիրառել համատեղ սեփականության վերաբերյալ դրույթները:

Ստեղծված իրավիճակից արված հետևությունները հաշվի առնվեցին ՌՍՖՍՀ Կենտգործկոմի՝ 1926 թ. ընդունած դաշնային հանրապետության ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգրքում, և դրա հիման վրա 1927 թ. ընդունված Հայկական ԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգրքում: Ըստ այդմ՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձինք հավասարեցվեցին գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսիններին և՛ համատեղ ձեռք բերված գույքի նկատմամբ, և՛ ալիմենտ ստանալու իրավունքներում: Օրենսգիրքը սահմանում էր, որ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվելու վերաբերյալ օրենսգրքի 10 հոդվածի ներգործությունը տարածվում է նաև այն անձանց գույքի վրա, որոնք թեկուզև տոմագրված չեն, սակայն փաստական ամուսնական հարաբերությունների մեջ են գտնվում, եթե նրանք փոխադարձաբար իրար ամուսիններ են համարում, կամ եթե նրանց միջև ամուսնական հարաբերությունները հաստատված են դատարանի կողմից՝ նկատի առնելով նրանց կյանքի փաստական նշաններն ու հանգամանքները (հոդվ. 11): Իսկ դատարանի համար որպես ամուսնական կենակցության ապացույց է, նայած հանգամանքներին, միատեղ կենակցելու փաստը, երբ կենակցության պահին գոյություն ունի ընդհանուր տնտեսություն, ամուսնական հարաբերությունների արտահայտությունը երրորդ անձանց առջև անձնական գրագրության մեջ և այլ փաստաթղթերում, կամ փոխադարձ նյութական օժանդակությունը, զավակներին միատեղ դաստիարակելը և այլն (հոդվ. 12)²⁰:

Փաստորեն առաջին անգամ օրենսդրորեն անրագրվեցին փաստական ամուսնական հարաբերությունների այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են ընդհանուր տնտեսություն վարելը, երեխաների համատեղ դաստիարակությունը, երրորդ անձանց համար ամուսնական հարաբերությունների բացահայտ լինելը, փոխադարձ նյութական օժանդակությունը: Նշված ոչ մի հարաբերություն, սակայն, ինքընստինքյան չէր հավասարեցվում ամուսնությանը: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարցը լուծվում էր դատարանի կողմից՝ վերը նշված ապացույցների հիման վրա: Ինչպես նշվում էր այդ ժամանակի դատական պրակտիկայում, «այդ ապացույցների բացակայությունը կնոջ և տղամարդու իրավահարաբերություններում վկայում է նրանց միջև ոչ թե ամուսնական, այլ պատահական կապերի առկայության մասին, ինչը չի պաշտպանվում օրենքի կողմից և որևէ իրավական հետևանք չի առաջացնում»²¹:

Այս ժամանակաշրջանը հայ և խորհրդային ընտանեկան իրավունքի պատմության մեջ բացառիկ է փաստական ընտանեկան հարաբերություններին իրավական ուժ տալու տեսակետից: Այն միաժամանակ բնութա-

²⁰ Տե՛ս **Գ. Յ. Ղարախանյան**, նշվ. աշխ., էջ 133:

²¹ Տե՛ս **Генкин Д. М., Новицкий И. Б., Рабинович Н. В.**, նշվ. աշխ., էջ 424-425, **Граве К. А., Пергамент А. И., Мальцман Т. Б.** Гражданское право. М., 1950, էջ 188:

գրվում էր ոչ միատեսակ դատական պրակտիկայով: Խնդիրներ էին առաջանում փաստացի լուծված, սակայն իրավաբանորեն չլուծված ամուսնությունների և երկարատև փաստական ամուսնական հարաբերությունների մրցակցության առումով: Միանշանակ չէին լուծվում նաև ժառանգման հետ կապված որոշ հարցեր²²: Բացի այդ, փաստական ամուսնական հարաբերությունների իրավական հետևանքներ սահմանելը կնոջ նյութական կախվածությունը չարաշահելու հնարավորություն էր ստեղծում²³: Օրենսդրությամբ լուծված չէր այն հարցը, թե կարո՞ղ է արդյոք անձը գտնվել չլուծված ամուսնության մեջ և միաժամանակ փաստական ամուսնական հարաբերություններում: Օրենքը սահմանում էր միայն, որ գրանցման ենթակա չեն այն անձանց միջև ամուսնությունները, որոնցից թեկուզ մեկը գտնվում է արդեն այլ գրանցված կամ չգրանցված ամուսնության մեջ (6 հոդված): Սակայն եթե քաղաքացին, լինելով օրինական ամուսնության մեջ, մտնում էր փաստական ամուսնության մեջ, նրա գույքային հարաբերությունների հատուկ կարգավորումը սահմանված չէր:

Փաստական ամուսնական հարաբերություններին իրավական նշանակություն տալը տևեց մինչև 1944 թ. հուլիսի 8-ի հայտնի իրամանագրի²⁴ ընդունումը, ըստ որի՝ իրավական նշանակություն էր տրվում միայն օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնություններին: Դա բացատրվում էր նրանով, որ կինն արդեն ամբողջությամբ ազատագրվել էր ամուսնու իշխանությունից, աշխատանքում և կենցաղում իրականում դարձել էր տղամարդուն հավասար, կարող էր ինքնուրույն պաշտպանել իրեն և իր երեխային: Այդ պատճառով վերացել էր փաստական հարաբերություններում կնոջ գույքային իրավունքները ճանաչելու միջոցով վերջինիս շահերը պաշտպանելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, համարվում էր, որ կայուն ամուսնությունը գրանցված ամուսնությունն է: Ամուսնության գրանցմանը տրվեց այնպիսի միջոցի նշանակություն, որով պետությունը կարող է մշակութադաստիարակչական ազդեցություն գործել կենցաղի վրա²⁵:

Այսպիսով, փաստական ամուսնությունն այլևս իրավական հետևանքներ չէր առաջացնում: Նման մոտեցում որդեգրվեց նաև հետագա կողմնակազմված ակտերում՝ 1969 թ. ՀԽՍՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ գործող 2004 թ. ընտանեկան օրենսգրքում:

Սակայն 1970-ական և հաջորդող տարիներին իրավագետները դարձյալ բարձրաձայնում էին փաստական ամուսնություններին իրավական պաշտպանություն տրամադրելու մասին²⁶: Ավելի ուշ շրջանում Մ. Վ. Կրոտովը գրում է. «Ոչ մի օրենսդրական արգելք չի կարող բացառել երկարատև արտամուսնական կապերը, որոնք իրենք՝ կողմերը, ուզեն, թե չուզեն, ճանաչում են փաստական ամուսնություն...: Հասարակական բարո-

²² Տե՛ս **Косова О. Ю.** «Фактические браки» и семейное право // «Правоведение», 1999, № 3, էջ 106-107:

²³ Տե՛ս **Генкин Д. М., Новицкий И. Б., Рабинович Н. В.**, նշվ. աշխ., էջ 433:

²⁴ Խոսքը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1944 թ. հուլիսի 8-ի «Չղի կանանց, բազմազավակ և միայնակ մայրերին ցույց տրվող պետական օգնությունն ավելացնելու, մայրության ու մանկության պահպանությունն ուժեղացնելու, «Հերոսուհի-Մայր» պատվավոր կոչում սահմանելու և «Մայրական փառք» շքանշան ու «Մայրության մեդալ» մեդալ հիմնելու մասին» իրամանագրի մասին է:

²⁵ Տե՛ս **Свердлов Г. М.**, նշվ. աշխ., էջ 11:

²⁶ Տե՛ս, օրինակ՝ **Реутов С. И.** К вопросу о фактических брачных отношениях // Вопросы гражданского, трудового и колхозного права. Пермь, 1973, էջ 82-102:

յականությունը նույնպես ենթարկվել է որոշակի փոփոխությունների՝ ավելի ու ավելի մեղմացնելով այն ատելությունը փաստական ամուսնությունների նկատմամբ, որը տիրում էր 70-80-ականներին»²⁷: Օ. Յու. Կոսովան կարծում է. «... ընտանիքի սոցիոլոգիական մեկնաբանման տեսանկյունից ակնհայտ է, որ փաստական ամուսնությունը չի կարելի չհամարել ընտանեկան միություն, եթե այն իրականացնում է նույն սոցիալական գործառույթները, ինչ գրանցված ամուսնության վրա հիմնված ընտանիքը»²⁸: Մ. Վ. Անտոկոլսկայան նշում է. «Փաստական ամուսնական հարաբերությունները զնալով լայն տարածում են ստանում, և սահմանափակվել ուղղակի այն փաստը հավաստելով, որ դրանք իրավական հետևանքներ չեն առաջացնում, բավական չէ»²⁹: Ա. Դ. Տոլստայան համոզված է, որ ցանկացած պետության ձեռնտու է, որ իր քաղաքացիները ամուր ընտանեկան կապերի մեջ մտնեն, որոնք, անկախ գրանցվելու հանգամանքից, կիրականացնեն ընտանիքի բոլոր հիմնական գործառույթները՝ սեռական, տնտեսական, վերարտադրողական և կրթական³⁰:

Հարցի կապակցությամբ պահպանողական գաղափարներ էին արտահայտում Լ. Պ. Կորոտկովան և Ա. Պ. Վիխրովը՝ նշելով, որ ընտանիքն ի սկզբանե ձևավորվում և ստեղծվում է օրենքի շրջանակներում, որ կենսակցությունը վկայում է ամուսնական հարաբերություններում թեթևամտության, անջատականության և անհուսալիության, ընտանիքի և հասարակության առջև անպատասխանատվության մասին³¹:

Մի շարք հայտնի ցիվիլիստներ չեն մեկնաբանում այս երևույթը՝ սահմանափակվելով խորհրդային տարիների, ինչպես նաև եվրոպական ընտանեկան իրավունքի դոկտրինայում ընդունված տեսակետը ներկայացնելով³²: Ժամանակակից հեղինակներից ոմանք էլ լռությամբ շրջանցում են հիշյալ խնդիրը³³: Մյուսները, չմերժելով փաստական ամուսնության իրավական կարգավորման հեռանկարը, գտնում են, որ ներկայումս վճռական քայլեր անելու հիմքեր չկան³⁴, և հնարավոր է, որ դեռ մոտ ապագայում չլինեն³⁵: Ոմանք էլ հակված են ճանաչելու փաստական ամուսնությունների շատ սահմանափակ հետևանքները³⁶:

Այսպիսով, տեսնում ենք, որ հեղինակների մի մասը փաստական ամուսնությունների ճանաչման հարցի լուծումը հրատապ է համարում, իսկ մյուսները կարծում են, որ դա ոչ թե ներկայի, այլ ապագայի խնդիր է: Բայց

²⁷ Տե՛ս «Гражданское право». Т. 3, М., 1998. էջ 269:

²⁸ Տե՛ս **Косова О. Ю.** О предмете семейного права // «Сибирский юридический вестник», 1998, № 3, էջ 77:

²⁹ Տե՛ս **Антокольская М. В.** Лекции по семейному праву. М. 1995, էջ 120:

³⁰ Տե՛ս **Толстая А. Д.** Фактический брак: перспективы правового развития // «Закон», 2005, № 10:

³¹ Տե՛ս **Короткова Л. П., Вихров А. П.** Семья – только в рамках закона // «Правоведение», 1994, № 5-6, էջ 160:

³² Տե՛ս **Нечаева А. М.** Семейное право. М., 2006, էջ 73, 91-92:

³³ Տե՛ս **Пчелинцева Л. М.** Семейное право России. М. 2004, էջ 188:

³⁴ Տե՛ս **Ильина О. Ю.** Брак как новая социальная и правовая реальность изменяющейся России. Тверь. 2005, էջ 34, 41:

³⁵ Տե՛ս **Косова О. Ю.** «Фактические браки» и семейное право // «Правоведение», 1999, № 3, էջ 95:

³⁶ Տե՛ս **Слепакова А. В.** Фактические брачные отношения и право собственности // «Законодательство», 2001, № 10, էջ 15:

բոլոր հեղինակները միակարծիք են այն հարցում, որ փաստական ամուսնական հարաբերություններին պետք է իրավական նշանակություն տրվի:

Ավելորդ չէ նշել, որ փաստական ամուսնական հարաբերությունների իրավական հետևանքների ճանաչման միտումը Արևմուտքի բոլոր զարգացած երկրներում նկատվում էր արդեն XX դարից սկսած: Ներկայումս եվրոպական երկրների մեծամասնությունը փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց մի շարք գույքային հարաբերությունների նկատմամբ ճանաչում է օրինական ամուսինների համանման հարաբերությունների կարգավորման վերաբերյալ նորմերի կիրառման հնարավորությունը: Ժամանակակից դոկտրինան այլևս չի վիճարկում արտամուսնական կենակցության որոշ ձևերի ճանաչման հարցում իրավունքի թույլատրելիությունը և նույնիսկ ցանկալիությունը: Արդարացիորեն ընդգծվում է, որ իրավունքի դրական դերը պետք է արտահայտվի «քվազիընտանեկան» վարքագծի կարգավորմամբ³⁷:

Ուսումնասիրելով արտասահմանյան որոշ երկրների համանման հարաբերությունները կարգավորող օրենսդրությունները՝ նկատում ենք, որ մի շարք պետություններ, օրինականացնելով փաստական կենակցությունները, նախևառաջ կանոնակարգել են փաստական ամուսնական զույգերի գույքային հարաբերությունները, նրանց տրամադրել են որշակի արտոնություններ ու առավելություններ, իսկ որոշ դեպքերում, ընդհակառակը, զրկել դրանցից³⁸: Այսպես.

1. Որոշ երկրներ նախատեսում են փաստական ամուսնությունների ձևակերպման (գրանցման) հատուկ ընթացակարգեր, օրինակ՝ գրավոր համաձայնություն (Ֆրանսիա), դիմում (Բելգիա, Իսլանդիա, Լյուքսեմբուրգ), հանդիսավոր արարողություն (Դանիա, Շվեդիա, Նիդերլանդներ): Որոշ երկրներ էլ, պարտադիր չհամարելով այդ հարաբերությունների ձևակերպումը, իրականացվելուց հետո ճանաչում են դրանց գոյության փաստը (Յունգարիա, Իտալիա, ԱՄՆ, Պորտուգալիա, Շվեյցարիա, Ուկրաինա)³⁹:

2. Ոչ մի երկրում փաստական ամուսնությունը իրավական հետևանքների առումով լիարժեքորեն չի հավասարեցվում օրինական ամուսնությանը: Որոշ երկրներում (Դանիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Յուլանդիա) օրենսդիրն առավելապես նմանեցրել է ամուսնությունը և գրանցված կենակցությունը: Այլ երկրներում, հակառակը, օրենսդրությամբ ընդգծվել են դրանց միջև տարբերությունները:

3. Արտասահմանյան երկրների օրենսդրություններով փաստական ամուսնության մեջ գտնվող անձինք հավասարեցվում են օրինական ամուսիններին՝ որպես կանոն սոցիալական ապահովության, կենսաթոշակային և հարկային օրենսդրության ոլորտներում տրամադրվող արտոնություններ:

³⁷ Տե՛ս **Петросян М. Е.** Современные тенденции развития семейного права. Научно-аналитический обзор. М., 1987, էջ 21:

³⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս **Косарева И. А.** Международное, зарубежное и российское право о статусе лиц, состоящих в фактических супружеских отношениях // «Семейное и жилищное право», 2009, № 1, **Борминская Д.** Новые тенденции в развитии семейного права: внебрачные союзы на примере отдельных европейских стран // «Семейное и жилищное право», 2007, № 2:

³⁹ Տե՛ս «Гражданское и торговое право зарубежных государств». Учебник. Т. II. М., 2006, էջ 521:

րի մասով. ձեռք են բերում կերակրողին կորցնելու նպաստ, բարոյական փոխհատուցում, այլ նյութական օժանդակություն, ալիմենտ պահանջելու իրավունքներ (Նորվեգիա, Յուգոսլավիա, Բելգիա, Շվեյցարիա, Իտալիա և այլ): Սահմանափակ դեպքերում ճանաչվում են նրանց ըստ օրենքի ժառանգման իրավունքները:

4. Փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձինք, որպես կանոն, չեն օգտվում ամուսինների անձնական ոչ գույքային իրավունքներից, այդ թվում՝ ամուսնական ազգանուն ունենալու իրավունքից: Նրանք, որպես կանոն, չունեն արհեստական սաղմնավորման մեթոդներից օգտվելու, ինչպես նաև համատեղ երեխաներ որդեգրելու իրավունքներ (բացառությամբ Յուգոսլավիայի, իսկ որոշակի պայմանների առկայության դեպքում նաև Իսպանիայի, Ֆրանսիայի, Յունգարիայի օրենսդրությունների), չեն օգտվում ամուսինների գույքի համատեղ սեփականության ռեժիմից, առանձին բացառություններով (օրինակ՝ Շվեդիայում համատեղ գույք են համարվում միայն բնակարանը և տնային կահավորանքի իրերը):

Հատկանշական է, որ փաստական ամուսնական հարաբերությունները մասնակիորեն օրինականացվել են Ուկրաինայի օրենսդրությամբ: Այսպես, Ուկրաինայի ընտանեկան օրենսգրքով նախատեսվում է, որ եթե տղամարդը և կինն ապրում են մեկ ընտանիքում, սակայն չեն գրանցում իրենց հարաբերությունները, ապա համատեղ ապրելու ընթացքում նրանց ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով: Նախատեսվում է նաև ալիմենտային պարտավորությունների առաջացման հնարավորություն (16, 91 հոդվածներ):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան⁴⁰ ցույց է տալիս, որ «ընտանեկան կյանք» հասկացությունը չի սահմանափակվում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է տարածվել նաև փաստական ընտանեկան, այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների նկատմամբ⁴¹:

Այժմ պարզենք փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց իրավական վիճակը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

⁴⁰ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածի դատական պրակտիկայի մասին մանրամասն տե՛ս <http://www.defence33.ru/echr/praktika1.htm>; <http://www.memo.ru/library/books/Lukjanc/Chapt4-7.htm>; <http://www.echr-base.ru/pravo6.jsp>:

⁴¹ Տե՛ս Պրոկոպովիչն (Prokopovich) ընդդեմ Ռուսաստանի (2004), Գավրիկովան (Gavrikova) ընդդեմ Ռուսաստանի (2007) գործերը: Կրունն ընդդեմ Նիդերլանդների (1994) գործով դատարանը վճռել է, որ ընտանեկան կյանքի հասկացությունը սահմանափակված չէ բացառապես ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է ներառել այլ «դե-ֆակտո» ամուսնական կապեր, որոնց շրջանակներում կողմերը բնակվում են միասին՝ առանց ամուսնության (տե՛ս նաև Ջոնսթոն (Johnston) ընդդեմ Իռլանդիայի (1986) գործը): Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության (1985) գործով դատարանը նշել է, որ համատեղ բնակվող զույգերը, որոնք ամուսնացած չեն, նույնպես իրավասու են օգտվելու 8-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից, եթե նրանց միջև հարաբերությունները կայուն են և կայացած (տե՛ս **Վ. Վ. Քոչարյան**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան. Ուսումնական նյութերի ժողովածու, Եր., 2007, էջ 336-337):

Ինչպես նշել ենք, ՀՀ գործող օրենսդրությամբ փաստական ամուսնության մեջ գտնվող անձանց իրավական պաշտպանություն ուղղակիորեն չի նախատեսվում. մասնավորապես նրանց համար չեն առաջանում ամուսինների անձնական և գույքային իրավունքներ ու պարտականություններ, նրանց գույքի նկատմամբ չեն տարածվում ամուսինների գույքի համար նախատեսված օրենսդրական (համատեղ սեփականության) և/կամ պայմանագրային ռեժիմները, նրանք չեն ճանաչվում ըստ օրենքի ժառանգներ, ինչպես նաև չեն օգտվում ամուսինների կարգավիճակից բխող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Գործող օրենսդրության վերլուծությունից, սակայն, եզրահանգում ենք փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց որոշ իրավունքների անուղղակի պաշտպանության մասին: Օրինակ՝ նրանցից մեկի մահվանից հետո մյուսը կարող է նրա ժառանգը համարվել երկու դեպքում՝ ըստ կտակի և ըստ օրենքի՝ որպես անաշխատունակ անձ, եթե մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել է նրա խնամքի ներքո (քաղ. օր. 1220 հոդվ.):

Անուղղակիորեն կարող է պաշտպանվել նաև փաստական ամուսինների համատեղ սեփականության իրավունքը այն բնակելի տարածության նկատմամբ, որը նրանք սեփականաշնորհել են «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» 1993 թ. հունիսի 26-ի օրենքի⁴² հիման վրա: Նշված օրենքի 3 և 13 հոդվածների բովանդակությունից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 26.09.08 թ. 3-505 (ՎԴ) նախադեպային որոշումից հետևում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք երեք պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Դրանք են՝ ՀՀ-ում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը: Ճիշտ է, փաստական ամուսինը չի հանդիսանում վարձակալ համարվող մյուս փաստական ամուսնու ընտանիքի անդամը, քանի որ ՀՀ բնակարանային օրենսգրքի⁴³ 54 հոդվածի համաձայն՝ որպես այդպիսիք համարվում են վարձակալի ամուսինը, երեխաները և ծնողները, սակայն նույն հոդվածը սահմանում է, որ այլ անձինք կարող են վարձակալի ընտանիքի անդամներ ճանաչվել, եթե նրանք բնակվում են վարձակալի հետ համատեղ և նրա հետ վարում են ընդհանուր տնտեսություն: Այսինքն՝ այս բացառիկ դեպքում էր, որ փաստական ամուսինների մոտ կարող էր առաջանալ համատեղ սեփականություն միայն այն տարածության նկատմամբ, որում նրանք երկուսն էլ գրանցված են, և որը նրանք սեփականաշնորհել են որպես համատեղ սեփականություն: Ընդ որում՝ տվյալ դեպքում առաջանում են ոչ թե ամուսինների սեփականության իրավահարաբերություններ, այլ միայն համապատասխան տարածության նկատմամբ համատեղ սեփականության իրավունք: Եվ նման իրավունքի առաջացման հիմքը ոչ թե փաստական ամուսնական հարաբերությունների առկայությունն է, այլ երկու քաղաքացի-

⁴² Օրենքն ուժը կորցրել է 28.11.06 թ. ՀՕ-199-Ն օրենքով:

⁴³ Օրենսգիրքն ուժը կորցրել է 04.10.2005 թ. ՀՕ-197-Ն օրենքով:

ների մշտական ապրելը մեկ տարածքում՝ հաստատված գրանցմամբ: Բացի այս դեպքից, փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց գույքը չի կարող ճանաչվել նրանց համատեղ սեփականությունը, թեև նրանց միջև ձևավորված անձնական-վստահական բնույթի հարաբերությունների ուժով իրականում նրանք գույքը տիրապետում և օգտագործում են համատեղ, առանց բաժինների որոշման, այսինքն՝ այնպես, ինչպես դա կատարվում է համատեղ սեփականության ռեժիմի դեպքում:

Այսպիսով, տեսնում ենք, որ փաստական ամուսինների գույքի վրա չի տարածվում ամուսինների գույքի ո՛չ օրենսդրական, ո՛չ էլ պայմանագրային ռեժիմը:

Իսկ ինչպե՞ս են որոշվում նրանց սեփականության հարաբերությունները համատեղ կյանքի ընթացքում և/կամ դրա ընդհատման դեպքում:

Այս կապակցությամբ նշենք, որ փաստական ամուսինների գույքային հարաբերությունների հարցը 1944 թ. հուլիսի 8-ի հրամանագրից հետո շոշափվել է նաև 1973 թ.: Հաստատելով փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց գույքային հարաբերությունների նկատմամբ ընտանեկան օրենսդրության դրույթների անալոգիայի կիրառման արգելքը՝ ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի պլենումը 1973 թ. փետրվարի 21-ի № 3 որոշմամբ սահմանեց, որ նշված հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվեն ընդհանուր բաժնային սեփականության վերաբերյալ քաղաքացիաիրավական նորմերը⁴⁴: Հատուկ նշվում էր, որ համատեղ գույքի բաժանման ժամանակ պետք է հաշվի առնել վիճելի գույքի ձեռքբերմանը կողմերից յուրաքանչյուրի ունեցած մասնակցության չափը: Նույնաբովանդակ դրույթ նախատեսվել է նաև ՀՀ Գերագույն դատարանի պլենումի 28.11.1991 թ. «Ամուսնա-ընտանեկան հարաբերություններից բխող գույքային վեճերը լուծելիս օրենսդրության կիրառման մասին» որոշման 2-րդ կետով: Թեև ՀՀ ԳԴ պլենումի նշված որոշումը ընդունվել էր մինչև ՀՀ նոր քաղաքացիական ու ընտանեկան օրենսգրքերի ընդունումը և դրանց համապատասխանեցված չէր, պրակտիկայում գույքային հարաբերությունների կարգավորումը նաև այսօր իրականացվում է քաղաքացիական օրենսգրքի բաժնային սեփականության վերաբերյալ նորմերով:

Փաստական ամուսինների գույքի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության կանոնների կիրառման մասին նշվում է նաև իրավունքի դոկտրինայում⁴⁵, ինչից ելնելով՝ տարբեր հեղինակներ առաջարկում են փաստական ամուսինների գույքային հարաբերություններում օգտագործել քաղաքացիական օրենսդրության ընդհանուր բաժնային սեփականության նորմերի վրա հիմնված քաղաքացիաիրավական համաձայնագրեր: Նրանք նշում են, որ եթե որպես ամուսիններ փաստական հարաբերությունների մեջ գտնվող անձինք չեն կարող կնքել ո՛չ ամուսնական, ո՛չ էլ

⁴⁴ Стѣи Постановление Пленума Верховного Суда РСФСР от 21 февраля 1973 г. № 3 «О некоторых вопросах, возникших в практике применения судами Кодекса о браке и семье РСФСР» // ВВС РСФСР, 1973, № 5:

⁴⁵ Стѣи **Реутов С. И.** К вопросу о фактических брачных отношениях // Учен. зап. Пермского ун-та. 1973, № 290, **Косова О. Ю.** «Фактические браки» и семейное право // «Правоведение». 1999, № 3, էջ 118-120:

գույքի բաժանման պայմանագրեր, ապա որպես բաժնային սեփականության մասնակիցներ՝ նրանք կարող են կնքել ընդհանուր գույքի բաժանման, դրա տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգի, դրա եկամուտների, պտուղների և արտադրանքի օգտագործման, տիրապետման, տնօրինման մասին համաձայնագրեր: Պարզապես անհրաժեշտ է պարզաբանել, որ փաստական ամուսինները՝ որպես բաժնային սեփականության մասնակիցներ, իրավունք ունեն իրար հետ կնքելու համապատասխան համաձայնագրեր, ինչի համար պետք է պահպանեն միայն գործարքի վավերության ընդհանուր պայմանները: Դրանք չպետք է հակասեն օրենքին, մասնավորապես՝ սահմանեն համատեղ սեփականության ռեժիմ կամ այլ իրավունքներ ու պարտականություններ, որոնք կարող են առաջանալ միայն օրինական ամուսնությունից⁴⁶:

Այստեղ առաջանում են պարզաբանման ենթակա որոշ հարցեր, մասնավորապես՝ ա) ինչպիսի՞ն է ընդհանուր բաժնային սեփականության սահմանման մասին համաձայնագրի, ինչպես նաև դրա կողմերի՝ փաստական ամուսինների հարաբերությունների իրավական բնույթը, բ) բավարարո՞ւմ է արդյոք առաջարկվող համաձայնագիրը այն փաստական հարաբերությունների պահանջները, որոնք առաջարկվում են կարգավորել դրա կիրառման միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվում է, որ անձինք կարող են կնքել ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ չնախատեսված, սակայն օրենքին չհակասող պայմանագրեր: Հիմնվելով ընդհանուր սեփականության վերաբերյալ նորմերի, ինչպես նաև պայմանագրերի մասին քաղաքացիական օրենսդրության դրույթների վրա՝ փաստական ամուսինները կարող են կնքել պայմանագիր, որին համապատասխան պետք է սահմանվի նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը ինչպես նոր ձեռք բերվող, այնպես էլ արդեն առկա մեկ կամ մի քանի գույքային օբյեկտների նկատմամբ:

Առաջին դեպքում կարելի է ենթադրել, որ երկու անձանց բաժնային սեփականության իրավունքը պետք է առաջանա գույքի փոխանցմանն ուղղված պայմանագրերի (առուծախ, փոխանակություն և այլ) կնքման միջոցով, որում որպես ձեռք բերող կողմ հանդես կգան երկու անձինք: Հավանաբար այդ պայմանագրերով էլ կորոշվի ձեռք բերված գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքում փաստական ամուսիններից յուրաքանչյուրի բաժինը: Իսկ հատուկ համաձայնագրի դերը, որը կնքվում է սեփականատերերի միջև, կհանգեցվի համատեղ գույքից օգտվելու կարգի սահմանմանը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ բաժնային սեփականության ռեժիմը գույքի նկատմամբ արդեն սահմանված է, և բաժինները որոշված են, նման համաձայնագիր կարող է ընդհանրապես չկնքվել:

Երկրորդ դեպքում, երբ բաժնային սեփականության ռեժիմը սահմանվում է արդեն իսկ առկա և, բնականաբար, փաստական ամուսիններից որևէ մեկին պատկանող գույքի նկատմամբ, նրանց միջև կնքվող համաձայնագիրը ձեռք է բերում գույքի փոխանցման գործարքի հատկանիշներ: Իսկ քաղ. օր. 172 հ. համաձայն՝ նման պայմանագիրը կդիտվի որպես սեփականու-

⁴⁶ Ст'ю Слепакова А. В. Правоотношения собственности супругов, էջ 413-416:

թյան իրավունքի ձեռքբերման հիմք: Այստեղից հետևում է, որ փաստական ամուսինների գույքային հարաբերություններում քննարկվող պայմանագրային կառուցակարգը կարող է համեմատվել այնպիսի պայմանագրերի հետ, ինչպիսիք են նվիրատվությունը և փոխանակությունը: Իսկապես, անձի կողմից մեկ կամ մի քանի իրերի նկատմամբ իրավունքում ունեցած բաժնի փոխանցման դեպքում տվյալ պայմանագիրը հիշեցնում է նվիրատվության կառուցակարգ: Անհատուցելիությունն այստեղ ակնհայտ է, բացի այդ, մեկ անձի մոտ ավելանում են ակտիվները՝ մյուսի մոտ դրանց նվազման հաշվին, առկա են նաև նվիրատուի մտադրությունը և նվիրառուի համաձայնությունը գույքի փոխանցման վերաբերյալ: Սակայն պարզ է, որ իրականում, եթե նման պայմանագրի անհրաժեշտություն առաջանա, այն կառնչվի ոչ թե փաստական ամուսիններից մեկի, այլ նրանցից յուրաքանչյուրի գույքին: Ընդ որում, դրա կազմում կարող է ներառվել այնպիսի բարդ օբյեկտ, ինչպիսին դրամն է, այն էլ՝ պայմանագրի կնքման պահին ոչ առկա, այլ ապագա եկամուտը՝ աշխատավարձ, այլ վարձատրություն: Իսկ քանի որ ամուսինների համատեղ սեփականության ռեժիմը տարածվում է նաև նրանցից յուրաքանչյուրի եկամուտների վրա, ուստի այդ մեխանիզմից օգտվել կարող են ցանկանալ նաև փաստական ամուսինները:

Այսպիսով, նվիրատվության պայմանագրի հետ քննարկվող պայմանագրային կառուցակարգի համեմատումն ավելորդ է դառնում՝ փաստական ամուսինների միջև փոխադարձ գույք տրամադրելու, ինչպես նաև դրանց կազմում փաստական ամուսիններից յուրաքանչյուրի եկամուտը ներառելու հանգամանքներով պայմանավորված: Փոխադարձ գույքի տրամադրումը տվյալ դեպքում կասկածի տակ է դնում քննարկվող պայմանագրի անհատույց բնույթը, ինչն իր հերթին հանգեցնում է այն փոխանակության պայմանագրի հետ համեմատելու մտքին: Առավել ևս, որ տվյալ դեպքում առկա է յուրաքանչյուր օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքում բաժինների, ինչպես նաև գույքի փոխադարձ փոխանցում: Բայց եթե փոխանակման, ինչպես նաև նվիրատվության պայմանագրերի վերջնական նպատակը գույքի փոխանցումն է, ապա տվյալ դեպքում գույքի փոխանցումն ինքնին չունի նման սկզբունքային նշանակություն: Հնարավոր է՝ նման պայմանագրով փաստական ամուսինները ցանկանան ամրագրել ընդհանուր տնտեսություն վարելու հիմքը կամ իրենց հարաբերություններին հրապարակային բնույթ տալ: Ավելի հավանական է, որ դրանով նրանք ընդհանուր գործի «ոչ բարենպաստ» ելքի դեպքում մեկ կամ երկու կողմերի համար սահմանեն գույքային երաշխիքներ: Ակնհայտ է, որ նման նպատակ վերը նշված պայմանագրերը չեն նախատեսում: Բացի այդ, կողմերից յուրաքանչյուրի ապագա եկամուտները գույքի կազմում ներառելը նույնպես թույլ չի տալիս քննարկվող պայմանագիրը համեմատել փոխանակման և նվիրատվության պայմանագրերի հետ: Արգելվում է նվիրատվությունն առանց առարկայի հստակ անհատականացման, իսկ փոխանակման պայմանագրի առարկա կարող է լինել միայն ապրանքը:

Առաջադրված հարցերն այս կամ այն չափով լուծվում են քննարկվող կառուցակարգը հասարակ ընկերակցության կամ համատեղ գործունեության պայմանագրի հետ համեմատելիս: Օրինակ՝ փոխադարձ տրամադրու-

մը տեղին է համատեղ գործունեության պայմանագրի դեպքում, որում մասնակիցները փոխադարձ պարտավորվում են ներդնել ավանդներ ընդհանուր գործում: Լուծվում է նաև այս կամ այն գույքը որպես ավանդ ներդնելու հնարավորության հարցը, քանի որ դրա ցանկը ոչնչով չի սահմանափակվում: Լիովին համընկնում է նաև պայմանագրի նպատակը: Ինչպես փաստական ամուսինների, այնպես էլ ընկերակցության մասնակիցների կողմից ավանդների ներդրումը ընդհանուր նպատակին հասնելու միջոց է: Կարևոր է նաև, որ քննարկվող երկու կառուցակարգերում էլ կողմերի միջև գոյություն ունեն անձնական-վստահական (ֆիդուցիար) բնույթի հարաբերություններ: Տեղին է հիշատակել Լ. Յու. Միխեևայի մոտեցումն այս կապակցությամբ. «Անհասկանալի է, որ փաստական ամուսինների գույքային հարաբերությունների նկատմամբ դատարաններն առաջնորդվում են դեռևս 1973 թ. ընդունված որոշմամբ և մերժում են քաղաքացիական օրենսդրության կիրառումը: Հայտնի է, որ բաժնային սեփականության հարաբերություններ առաջացնում է հասարակ ընկերակցության մասին պայմանագիրը, որը կարող է կնքվել ոչ միայն շահույթ ստանալու նպատակով: Տվյալ պայմանագրի համար օրենքով չի սահմանվում պարտադիր գրավոր ձև: Ի՞նչ, եթե ոչ պայմանագիր գոյություն ունի երկու ֆիզիկական անձանց միջև, որոնք միավորել են իրենց միջոցները որևէ գույք համատեղ ձեռքբերելու համար»⁴⁷:

Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս անել որոշ եզրահանգումներ ընդհանուր սեփականության սահմանման մասին փաստական ամուսինների գույքային համաձայնագրի վերաբերյալ:

Այդ համաձայնագիրը չունի իր մասնակը քաղաքացիական օրենսդրությամբ թվարկված պարտավորությունների հայտնի ձևերի մեջ: Թեև որոշ հատկանիշների ուժով այն կարող է դասվել գույքի փոխանցմանն ուղղված պայմանագրերի շարքը, սակայն նրա բոլոր բացահայտված առանձնահատկություններն առավել լիարժեք հաշվի է առնում հասարակ ընկերակցության պայմանագրի մոդելը: Քննարկվող կառուցակարգը պետք է ճանաչել որպես կոլեկտիվ միավորումների ստեղծմանն ուղղված պայմանագիր⁴⁸:

Այսպիսով, փաստական ամուսինների սեփականության հարաբերությունների նկատմամբ կիրառվում են բաժնային սեփականության մասին կանոնները, իսկ բաժնային սեփականություն սահմանելու հիմքը փաստական ամուսինների միջև հասարակ ընկերակցության պայմանագիրն է, որը պետք է կնքվի գրավոր, սակայն գրավոր ձևը չպահպանելը այն անվավեր չի դարձնում:

Ավելորդ չէ նշել, որ Գերմանիայում առանց գրանցման ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձինք կնքում են գույքի մասին պայմանագիր: Միաժամանակ, գերմանական դատական պրակտիկան փաստական ամուսնության մեջ մտնելը համարում է որպես քաղաքացիաիրա-

⁴⁷ Տե՛ս **Михеева Л. Ю.** Десятилетний юбилей СК РФ: итоги и перспективы развития семейного законодательства // «Семейное и жилищное право», 2007, № 1, էջ 43:

⁴⁸ Մանրամասն տե՛ս **Брагинский М. И., Витрянский В. В.** Договорное право. Договоры о займе, банковском кредите и факторинге. Договоры, направленные на создание коллективных образований. Кн. 5. Т. 1. М., 2006, էջ 686 - 695: Փաստական ամուսինների քննարկվող համաձայնագիրը, բերված անալոգի հետ մեկտեղ, իր իրավական բնույթով կարող է դասվել ֆերմերային տնտեսության անդամների միջև կնքվող պայմանագրերի թվին:

վական ընկերության ստեղծում, այսինքն՝ անձանց միավորում, որն օրենսդրությամբ իրավաբանական անձ չէ, բայց կարող է ունենալ առանձնացված գույք: Ընդ որում, փաստական կենսակցությունը ճանաչվում է ներքին ընկերություն: Դա նշանակում է, որ ընկերության մասին համապատասխան նորմերը կիրառվում են միայն փաստական անուսինների միջև հարաբերությունների նկատմամբ, բայց ոչ երրորդ անձանց: Հետևաբար, փաստական անուսինները կարող են պայմանագիր կնքել, որը կարգավորում է իրենց գույքային հարաբերությունները, և միայն նշված հարաբերությունները կարող են լինել պայմանագրի առարկա: Սովորաբար դրանք համարվում են «պարտնյորության» մասին պայմանագրեր, որոնց համար նախատեսված չէ որոշակի ձև. դրանց նմուշները հրապարակվում են:

Հաջորդ հարցը, որ ծագում է, այն է՝ բավարարո՞ւմ է արդյոք առաջարկվող պայմանագիրը այն փաստական հարաբերությունների պահանջները, որոնք առաջարկվում են կարգավորել դրա կիրառման միջոցով: Պատասխանն այն է, որ բաժնային սեփականության նորմերը և քաղաքացիաիրավական պայմանագրերը լիարժեք չեն պաշտպանում, երբեմն նույնիսկ հակասում են փաստական անուսինների շահերին:

Այսպես, բաժնային սեփականության նորմերի կիրառման դեպքում ընդհանուր գույքը բաժանելիս փաստական անուսինների բաժինները որոշվում են վիճելի գույքի ձեռքբերմանը կամ ստեղծմանը նրանցից յուրաքանչյուրի ներդրած միջոցների կամ աշխատանքի չափերից ելնելով, ուստի, անհրաժեշտ է ապացուցել այդ ներդրման փաստը և չափը, մասնակցության աստիճանը: Այսինքն՝ գույքը ընդհանուր բաժնային սեփականություն ճանաչելու համար պահանջվում է ապացուցել ոչ թե փաստական անուսնական հարաբերությունների առկայության փաստը, այլ այն, որ կոնկրետ գույքը հենց փաստացի անուսինների միջոցներով կամ նրանց երկուսի աշխատանքի մասնակցությամբ է ձեռք բերվել:

Բացի այդ, հանրօգուտ աշխատանքը՝ տնային տնտեսություն վարելը, երեխաներին դաստիարակելը և այլն, տվյալ դեպքում հաշվի չեն առնվում: Փաստական անուսինների աշխատանքային, ձեռնարկատիրական, մտավոր գործունեությունից ստացված վարձատրությունը և այլ եկամուտները չեն համարվում նրանց ընդհանուր գույքը:

Տեսնում ենք, որ անհրաժեշտ է սահմանել նոր կառուցակարգ, որն առավել արդյունավետ կպաշտպանի փաստական անուսինների սեփականության հարաբերությունները: Այդ կառուցակարգի դերը լավագույնս կարող է կատարել ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված անուսնական պայմանագիրը: Առաջարկում ենք փաստական անուսինների սեփականության հարաբերությունների նկատմամբ կիրառել հենց անուսնական պայմանագրի կառուցակարգը՝ հետևյալ հիմնավորմամբ:

Անուսնական պայմանագրով անուսինները կարող են փոփոխել ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականություն՝ անուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ անուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Անուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես անուսինների առկա, այնպես էլ հետագայում ձեռք բերվելիք գույքի, այդ թվում՝ անու-

սինների եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներից ածանցվող տարբեր գույքային ձեռքբերումների նկատմամբ:

Ներառելով այնպիսի օբյեկտ, ինչպիսին են ապագա եկամուտները, ինչպես նաև հնարավորություն տալով սահմանել գույքային ռեժիմ ոչ միայն առանձին օբյեկտների, այլև ողջ գույքի նկատմամբ՝ ամուսնական պայմանագիրը դառնում է յուրահատուկ կառուցակարգ: Բացի այդ, փաստական ամուսինների միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիրը կարող է սահմանել միայն բաժնային սեփականություն այն դեպքում, երբ ամուսնական պայմանագիրը հնարավորություն է տալիս սահմանելու թե՛ համատեղ, թե՛ բաժնային, թե՛ ամուսիններից յուրաքանչյուրի սեփականությունը: Հասարակ ընկերակցության պայմանագիրը սահմանում է ընդհանուր բաժնային սեփականության ռեժիմ մասնակիցների կողմից որպես ավանդ ներդրած ողջ գույքի նկատմամբ, իսկ եկամուտների նկատմամբ, ի տարբերություն ամուսնական պայմանագրի, այն մասով միայն, որոնք ստացվել են համատեղ գործունեությունից:

Պրակտիկ կիրառելիության տեսակետից ևս ամուսնական պայմանագիրը լիարժեք հաշվի է առնում համատեղ կյանքի ընթացքում ամուսինների գույքի կազմի փոփոխությունները, իսկ մյուս դեպքում նախկինում կնքված պայմանագրում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ:

Այսպիսով, ակնհայտ է, որ այլ իրավական կառուցակարգ, քան ամուսնական պայմանագիրն է, չի կարող ավելի լավ կարգավորել փաստական ամուսինների գույքի կապակցությամբ առաջացող հարաբերությունները: Ավելին, այդ պայմանագրի ունիվերսալությունն այն է, որ լինելով ընտանեկան օրենսդրության ինստիտուտ, այն միաժամանակ համարվում է նաև քաղաքացիաիրավական օրենսդրության տարր: Հենց այդ առանձնահատկությունը, ինչպես նաև պայմանագրի կամավորությունը և համապատասխան նորմերի դիսպոզիտիվությունը, պայմանագրով ներառվող գույքային օբյեկտների լայն ընտրությունը, ընդհանուր սեփականության իրավունքում կողմերից յուրաքանչյուրի բաժնի որոշման ազատությունը և ցանկացած պահի այդ համաձայնագրի գործողությունը դադարեցնելու հնարավորությունը թույլ են տալիս լիարժեք հաշվի առնել օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստական ամուսնական հարաբերությունների առանձնահատկությունները, միաժամանակ կարգավորել դրանք առանց ընտանեկան արժեքները պահպանող բարոյաէթիկական նորմերը խախտելու⁴⁹:

⁴⁹ Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են փաստական ամուսնական հարաբերությունների կարգավորման նաև այլ լուծումներ: Օրինակ՝ Ա. Ս. Իվանով-Կուլագինը, ով մերժում է փաստական ամուսինների գույքի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության կանոնների կիրառումը, գտնում է, որ պետք է կիրառվի օրենքի անալոգիա: Բայց քանի որ բաժնային սեփականության մասնակիցների հարաբերությունները համանման չեն փաստական ամուսինների հարաբերություններին, ուստի ավելի ճիշտ է կիրառել ընտանեկան օրենսդրության անալոգիա, մասնավորապես՝ ամուսնության անվավերության գույքային հետևանքները: Ըստ նրա՝ հարգելի պատճառների առկայության դեպքում փաստական ամուսիններից յուրաքանչյուրին պետք է հավասարեցնել բարեխիղճ ամուսնուն, որի ամուսնությունը ճանաչվել է անվավեր, և որպես հետևանք, կիրառել ընդհանուր համատեղ սեփականության նորմերը (տե՛ս **Иванов-Кулагин А. С.** Правовой режим имущества лиц, состоящих в

Փաստական ամուսնական հարաբերություններին իրավական պաշտպանություն տրամադրելու խնդրի հետ ուղղակիորեն կապված է այս հարաբերություններին առնչվող խնդրահարույց հաջորդ հարցը, թե արդյո՞ք փաստական ամուսնական հարաբերությունները իրավական պաշտպանություն ստանալու համար պետք է բավարարեն որոշակի պայմանների, դրանով իսկ առանձնանալով արտամուսնական այլ միություններից:

Փաստական ամուսնական հարաբերությունները, նշում են Վ. Դանիլինը և Ս. Ռեուտովը, շատ թե քիչ երկարատև և կայուն հարաբերություններ են տղամարդու և կնոջ միջև, որոնք ապրում են որպես մեկ ընտանիք, վարում են ընդհանուր տնտեսություն: Այն ոչ թե քաղաքացիաիրավական գործարք է, այլ առավելապես անձնական բնույթի միություն, որը բավականին նման է գրանցված ամուսնությանը⁵⁰: Փաստական ամուսնությունը տղամարդու և կնոջ երկարատև, կայուն միություն է, որը բնութագրվում է համատեղ ապրելով, ընդհանուր տնտեսություն վարելով, երեխաների առկայության դեպքում՝ նրանց դաստիարակելով և այլն: Այսինքն՝ զլխավորը անձանց՝ ամուսինների հատուկ հարաբերությունների մեջ գտնվելն է⁵¹: Ս. Վ. Կրոտովը գրում է. «Փաստական ամուսնություն է համարվում դրա մեջ գտնվող անձանց միջև հարաբերությունը, որը բավարարում է ամուսնության մեջ մտնելու բոլոր պահանջները և պայմանները, սակայն օրենքով սահմանված կարգով գրանցված չէ»⁵²: Այս հեղինակը փաստական ամուսնության համար պարտադիր է համարում ամուսնության արգելքների բացակայությունը և դրական պայմանների առկայությունը:

Գտնում ենք, որ փաստական ամուսնությանը ՀՀ օրենսդրությամբ իրավական պաշտպանություն տրամադրելու դեպքում պետք է կարևորել նրա այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են շարունակականությունը (ընդ որում, օրենքով կարող է սահմանվել նվազագույն ժամկետ, կամ դա կարող է զնահատվել դատարանի կողմից), կայունությունը, օրենքով թույլատրված լինելը, այսինքն՝ ամուսնության կնքման արգելքների բացակայությունը և դրական պայմանների առկայությունը (տարիք, ազգակցություն և այլ): Ուստի, «փաստական ամուսնությունը» կարելի է բնորոշել որպես **տղամարդու և կնոջ երկարատև, կայուն միություն, որը ձևավոր-**

фактических брачных отношениях // «Правоведение», 1977, № 2, էջ 46-50): Ա. Վ. Սլեպակովան առաջարկում է օրինական ամուսինների իրավունքները հավասարեցնել միայն այն փաստական ամուսինների գույքի նկատմամբ իրավունքներին ու պարտականություններին, որոնք զրկված են եղել օրինական ամուսնության մեջ մտնելու հնարավորությունից, մասնավորապես՝ Հայրենական պատերազմում կամ վերջին տարիների մարտերում նրանցից մեկի մահանալու հետևանքով և նման արտակարգ այլ դեպքերում (տե՛ս **Слепакова А. В.** Правоотношения собственности супругов. М., 2005, էջ 416: Ս. Վ. Անտոկոլսկայան առաջարկում է երկարատև արտամուսնական հարաբերություններում գտնվող անձանց տալ ավիենտ պահանջելու, ըստ օրենքի ժառանգելու իրավունքներ, ինչպես նաև ուղղակի թույլատրել կնքել ամուսնական պայմանագիր, այդ թվում՝ սահմանելով համատեղ սեփականության ռեժիմ (տե՛ս **Антокольская М. В.** Лекции по семейному праву. М., 1995, էջ 120, նաև՝ **Тарусина Н. Н.** Брак по российскому семейному праву. Учебное пособие. М., 2010, էջ 157):

⁵⁰ Տե՛ս **Данилин В. И. Реутов С. И.** Юридические факты в советском семейном праве. Свердловск, 1989, էջ 66-67:

⁵¹ Տե՛ս **Тарусина Н. Н.**, նշվ. աշխ., էջ 157:

⁵² Տե՛ս «Гражданское право». Т. 3. М., 1998, էջ 269:

վել է նրանց միջև հանրայնորեն ճանաչված պայմանների պահպանմամբ և բնութագրվում է համատեղ ապրելով, ընդհանուր տնտեսություն վարելով, իսկ երեխաների առկայության դեպքում՝ նրանց դաստիարակելով: Այլ դեպքում երևույթը կորակվի ոչ թե փաստական, այլ «քվազիփաստական» (օրինակ՝ իրավաբանորեն ոչ ազատ կարգավիճակով անձանց միությունը⁵³) ամուսնություն:

Այսպիսով.

1. *Ժամանակն է վերացնել փաստական ամուսնական հարաբերությունների նկատմամբ «իրավական անտարբերությունը»՝ հաշվի առնելով նաև, որ փաստական հարաբերությունների այլ տեսակների հետ ՀՀ գործող օրենսդրությունը, այնուամենայնիվ, կապում է որոշ իրավական հետևանքներ⁵⁴:*

2. *Քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելու միջոցով քննարկվող հարաբերությունների կարգավորումը պահանջում է էական մշակվածություն թե՛ տեսական, թե՛ պրակտիկ կիրառության ասպեկտներով:*

3. *Փաստական ամուսինների գույքի նկատմամբ անհրաժեշտ է ճանաչել ամուսինների գույքի պայմանագրային ռեժիմը և ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ սահմանել ամուսնական պայմանագիր կնքելու նրանց իրավունքը:*

ТАТЕВИК ДАВТЯН – Проблемы правового регулирования фактических брачных отношений. – В статье освещаются два основных вопроса, широко дискутируемых в правовой литературе: должно ли государство признать правовые последствия за фактическими браками, и если да, то в каком объеме? Должны ли фактические браки обладать определенными признаками, то есть соответствовать определенным законодательным требованиям, чтобы быть признанными, и если да, то каковы эти признаки?

Автор освещает мнения и позиции известных цивилистов, дает краткий исторический обзор законодательного регулирования этих отношений, а также представляет современное состояние проблемы.

Анализируя понятие и признаки фактического брака, автор ссылается на зарубежный опыт и предлагает конкретные меры по совершенствованию Семейного кодекса РА. В частности, к имущественным отношениям фактических супругов предлагается применить договорный режим имущества законных супругов и установить право фактических супругов заключать брачный договор.

TATEVIK DAVTYAN – The Problems of Legal Regulation of Actual Marital Relations. – This article refers to the research and analysis of historical and current processes of legal regulation of actual marital relations.

⁵³ Սակայն կարծում ենք, որ նման միություններն էլ, այսինքն՝ նրանք, որոնք չեն համապատասխանում սահմանված պայմաններին, օրինակ՝ տարիք, այլ ամուսնության մեջ գտնվելը և այլն, կարող են առողջացվել դատարանով՝ անվավեր ամուսնության պռոզացման (սանացիայի) սխեմայով:

⁵⁴ Խոսքը նախևառաջ փաստական դաստիարակության մասին է (ընտ. օր. 84 հոդվածը սահմանում է որոշակի պայմանների առկայության դեպքում փաստական դաստիարակի՝ փաստական սանից ալիմենտ պահանջելու իրավունքը):

It mainly elucidates two main problems regarding open marriage, which are widely discussed in legal doctrine: does the state have to recognize legal consequences of open marriage? If yes, then to what extent? Should open marriages have certain criteria, i.e. meet certain legal requirements to be acknowledged by law, and if yes, which are these criteria?

In the light of the problems mentioned above, the article represents the opinions and viewpoints of well-known lawyers, refers to brief historical overview of the legal regulation of these relations and to its current situation.

The article also identifies the concept and features of the open marriage, refers to foreign practice (that of European countries in particular), provides the overview of the European Court of Human Rights regarding this issue and the conclusion is that it is time for RA legislator to stop ignoring the actual marital relations and amend Family Code of RA via recognizing the legal consequences of “de facto” marital relations. In particular, the author suggests to extend the contractual material regime set for conjugality also to open marriage and to provide the open marriage partners with the right to sign a marital contract.